

---

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (Տաթևի վանքային համալիրի օրինակով)

### ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մեր ժամանակներում զբոսաշրջությունն աշխարհում ամենաարագ զարգացող ոլորտներից է: Զնայած մարտահրավերներին (տարբեր երկրներում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական իրադարձություններ, համաշխարհային տնտեսական ճգնաժամ)<sup>1</sup> վերջին տասնամյակում զբոսաշրջությամբ զբաղվող կառույցների և դրանց ծառայություններից օգտվողների քանակը ոչ միայն չի նվազել, այլև կրկնապատկվել է<sup>1</sup>: Ներկայումս անվիճելի է, որ միայն բնական ու պատմամշակութային հրաշալիքների առկայությունը բավարար չէ զբոսաշրջության համակարգի կազմակերպման արդի պահանջներն ապահովելու համար: Անհրաժեշտ է նաև պատշաճ մակարդակի հասցնել տուրիզմի կառավարման ու կազմակերպման ենթակառուցվածքային բոլոր բաղադրիչները (անվտանգության, փոխադրամիջոցների, հյուրանոցների բազմաշերտ համակարգ, սպասարկման տարաբնույթ հաստատությունների, սննդի, ժամանցի ու հանգստի վայրերի ցանց), որոնք ուղղակի ազդեցություն ունեն ոլորտի լիարժեք զարգացման գործընթացի վրա<sup>2</sup>:

Հայաստանում ևս մեծ ուշադրություն է դարձվում զբոսաշրջության տարբեր ձևերի և եղանակների խթանմանը: Այս ոլորտի զարգացումն ընդգրկվել է կառավարական ծրագրերում՝ դիտվելով տնտեսության զարգացման և մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Հողվածում կներկայացնենք Տաթևի վանական համալիրում և հարակից բնակավայրերում իրականացվող աշխատանքները, որոնք միտված են տարածաշրջանն առավել գրավիչ դարձնելու տարբեր երկրներից ժամանող զբոսաշրջիկների համար:

Հիմնվել ենք մեր կատարած դաշտային ուսումնասիրությունների վրա, որի համար կիրառվել է անձնական դիտարկումների, տեղացիների և զբոսաշրջիկների հետ անցկացվող անհատական զրույցների և հարցումների մեթոդը:

Հակիրճ ներկայացնենք տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը միտված աշխատանքները և տեղացիների կողմից իրականացվող միջոցառումները:

Տաթևի վանքային համալիրը գտնվում է Սյունիքի մարզում՝ Գորիսի շրջանում, նույնանուն գյուղից գրեթե մեկ կիլոմետր հեռավորության վրա: Կառուցված լինելով ձորի եզրին՝ ներդաշնակ ամբողջություն է կազմում բնապատկերի հետ՝ հնարավորություն տալով այցելուներին հիանալ

---

<sup>1</sup> Տե՛ս «Համաշխարհային տնտեսական ֆորումի զբոսաշրջության զարգացման զեկուլոց», USAID CAPS, 2009, ապրիլ:

<sup>2</sup> Տե՛ս **Биржаков М. Б.** Введение в туризм. М., 2006, էջ 349:

բնության ողջ գեղեցկությամբ: Տաթև անվան մասին կան մի քանի ավանդություններ: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Սյունիքում քարոզել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեն կամ Ստաթեն: Վերջինս նահատակվել է Սյունիքում, իսկ նրա անունը ժամանակի ընթացքում հնչյունափոխվելով դարձել է Տաթև: Մեկ այլ ավանդության համաձայն, որն, անշուշտ, ունի ժողովրդական ծագում, Տաթև անունը մեկնաբանվում է «տաթև» արտահայտությամբ: Այս անվան բացատրություններից մեկն էլ հետևյալն է. բառն ունի փոքրասիական ծագում, այն ծագում է խեթալուվիական երկնքի ու ամպրոպի աստված Դաթայի կամ Տատայի անունից: Վանական համալիրում գտնվող հիմնական հուշարձանների խումբը վանքի ընդարձակ բակում է: Տաթևի վանքը նշանակալի դեր է կատարել երկրի մշակութային կյանքի զարգացման գործում:

Ջրոսաշրջիկներին հետաքրքրող բնության և պատմամշակութային տեսարժան վայրերը բազմազան են և յուրօրինակ: Վանական համալիրում առանձնանում է Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին (895-906 թթ.), որը համալիրի կենտրոնական կառույցն է, և, որպես Սյունյաց իշխանության գլխավոր տաճար, մեծ ուշադրություն է դարձվել նրա տարածական լուծմանը, ինչպես նաև ներքին ու արտաքին հարդարմանը<sup>3</sup>:

Այցելուներին գրավող բացառիկ երևույթներից է աշխարհի ամենաերկար ճոպանուղին (5,7 կմ երկարությամբ), որը զբոսաշրջային «իրարանցում» է առաջացնում թե՛ Հայաստանում, թե՛ երկրի սահմաններից շատ ու շատ հեռու: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած բազմաթիվ հյուրեր են մասնակցել ճոպանուղու բացման արարողությանը, իսկ առաջին ուղևորները եղել են նախագահ Սերժ Սարգսյանը և Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Տաթևի ճոպանուղին 2011 թ. հունվարի 1-ից առայսօր սպասարկել է ավելի քան 51000 ուղևորի: Ինչպես տեղեկացնում է ճոպանուղու տնօրենը, ավելի քան 3000-ը եղել են հարակից Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Տաթև, Սվարանց և Տանձատափ համայնքների բնակիչներ, ովքեր ճոպանուղու ծառայություններից օգտվել են անվճար<sup>4</sup>:

Պակաս հետաքրքիր չէ նաև ճարտարապետական յուրօրինակ լուծումներով կառուցված նշանավոր ճոճվող հուշասյունը՝ Գավազանը, որը կառուցված է այնպես, որ ճոճվում է նույնիսկ ձեռքի հպումից<sup>5</sup>:

Ձիթհանը՝ ավանդական եղանակով ձեթի պատրաստման ամենաուշագրավ արտադրություններից մեկը, որն ամբողջովին վերականգնվելուց հետո՝ որպես ինտերակտիվ թանգարան, հնարավորություն կընձեռնի այցելուներին ծանոթանալու միջնադարյան Հայաստանում ձեթի արտադրման տեխնոլոգիային, ինչպես նաև վանականների կյանքի և ավանդական խոհարարական մշակույթի առանձնահատկություններին:

Տաթևի մասին խոսելիս անհնար է չհիշել հանրահայտ Սատանի կանուրջը՝ շրջապատված քարանձավներով<sup>6</sup>:

<sup>3</sup> Տե՛ս **Էդուարդ Չոհրաբյան, Համլետ Միրզոյան**, Գորիսի հանրագիտարան, 2008, էջ 407:

<sup>4</sup> Տե՛ս [www.armtown.com](http://www.armtown.com)

<sup>5</sup> Տե՛ս **Էդուարդ Չոհրաբյան, Համլետ Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 407:

<sup>6</sup> Տե՛ս [www.findarmenia.com](http://www.findarmenia.com)

Ջրոսաշրջիկների կողմից առավել սիրված գյուղերից են Տանձատափը (հայտնի է իր արևահամ մրգերով, մասնավորապես՝ ընկույզով), Հարսնածորը (հայտնի իր լեգենդով<sup>7</sup>) և այլն:

Ըստ նախապես մշակված զբոսաշրջական երթուղու՝ լեռնային տուրիզմի սիրահարներին առաջարկվում է նաև Գյազբելի լեռնանցքով բարձրանալ 3392մ բարձրությամբ Արամազդ լեռը, որ գտնվում է Տաթևից հարավ-արևմուտք, 10կմ հեռավորության վրա:

Նկատենք, որ տարածքում տեղադրված են հայերեն և անգլերեն ճանապարհային ցուցանակներ, և ճանապարհները բարեկարգ են:

Տարածաշրջանի բազմաբնույթ տեսարժան վայրերից առանձնացրել ենք առավել հետաքրքրություն ներկայացնողները՝ համաձայն զբոսաշրջիկների շրջանում մեր անցկացրած հարցումների:

Քանի որ մեր ժողովրդին բնորոշ է հյուրասիրությունն ու մարդամոտությունը՝ ուսումնասիրության ընթացքում փորձեցինք ճշտել, թե ինչպես են տեղացիները կարողանում հաղորդակցվել օտարազգի զբոսաշրջիկների հետ:

Հարցումներից պարզվեց, որ տեղացիները զբոսաշրջիկների հետ հաղորդակցվում են հիմնականում անգլերեն և ռուսերեն: Շփումը շատ հեշտ է հատկապես դպրոցականների համար, քանի որ, ինչպես նշում են տեղացի երեխաները, դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում անգլերենի ուսուցմանը՝ զբոսաշրջիկների հետ բնակիչների ուղղակի շփումն ապահովելու նպատակով:

Ջրոսաշրջիկների համար բնակավայրն առավել հարմարավետ և գրավիչ դարձնելու ակնկալիքով Տաթև գյուղի մի քանի ընտանիքներ այցելուների գիշերակացի համար հատուկ պայմաններ են ստեղծում, անգամ տրամադրում են իրենց առանձնատները, առաջարկում ավանդական ուտեստի ընտրանի:

Գիշերակացը և նախաճաշն այստեղ արժե շուրջ 5000 դր., իսկ եթե սենյակներն առավել հարմարավետ են, ունեն համակարգիչ և ինտերնետային կապ՝ 6000 դր.: Այդ հարցերով զբաղվում է Տաթևում գործող «Ինֆո» կենտրոնը, որտեղ կարելի է նաև 1000 դրամով վրաններ վարձել: Իսկ տուրիստական կազմակերպություններում գործող գնային համակարգը այլ է: Ըստ «Հյուր սերվիսի»՝ 2 օրը մեկ գիշերով արժե 4500 դր., իսկ Գորիսում գտնվող «Մինա» և «Քրիստի» հյուրանոցներում՝ լրացուցիչ պետք է վճարել նաև 2000 դր.: Մինչև 12 տ. երեխաներին՝ 50% զեղչ: Ձեռչեր գոյություն ունեն նաև ճոպանուղու համար, մինչև 7 տարեկան երեխաներին՝ անվճար:

Մինչ այսօր Տաթևում գործող հյուրանոց և ճաշարան չկա, սակայն կառուցվում են և շինարարական աշխատանքներ են տարվում: Գորիսում, Հալիձորում կան հյուրանոցներ: Տաթևում հիմնականում գործում են B&B թեյարաններ և արագ սննդի կետեր (Fast Food): Մեր այցելած թեյարաններից որևէ մեկում ճաշացանկ չկար, քանի որ, ըստ աշխատակիցների, տեսականին մեծ չէ և անփոփոխ է՝ տնական պանիր, հավ, մեղր, խտաբույսերով թեյ, լավաշ: Ինչպես տեղեկացանք «Ինֆո» կենտրոնից, այցելուների հա-

<sup>7</sup> Հարսնածորն իր անվանումը ստացել է համաձայն գեղեցիկ աղջկա մասին լեգենդի, ով նախընտրեց ձորից վայր նետվել, քան դառնալ Շահ Աբասի հարսնացուն (տես **Էդուարդ Ջոհրաբյան, Համլետ Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 407):

մար անհատական էքսկուրսիաներ նախատեսված չեն, էքսկուրսավարներ չունեն: Փոխարենն առաջարկում են այլ ծառայություններ՝ ծիավարություն, մասնակցել ավանդական թոնրի լավաշի թխման ընթացքին և համտեսել:

Ժամանցի վայրեր ևս չկան, քանի որ, ըստ տեղացիների, զբոսաշրջիկների մեծ մասը նախընտրում է զբոսնել, հիանալ բնությամբ: Այս նպատակով կազմակերպվում են էքսկուրսիաներ Սիսիանի կամ Որոտանի տարածքում, ոտքով հասնում են մինչև Տաթևի վանք:

Առաջիկայում նախատեսվում է վանքի տարածքում բացել թանգարան, որտեղ ժամանակավոր ցուցահանդեսների սկզբունքով այցելուներին կներկայացվեն հանրապետության այլ թանգարաններից ցուցանմուշներ, օրինակ՝ Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու քանդակազարդ դուռը, միջնադարյան ձեռագրեր, մանրանկարներ, եկեղեցական սպասք, կենցաղային իրեր, տարազ, արհեստագործական արտադրանք և այլն:

Բուն թանգարանային միջոցառումներից բացի՝ կկազմակերպվեն նաև գործնական պարապմունքներ (օրինակ՝ մոմի պատրաստման դասընթացներ) և տարածքի մշակույթին բնորոշ սեզոնային տոներ ու արարողություններ, օրինակ՝ Խաղողօրհնեքի ծեսը:

Վանքի նախկին մատենադարանի վերականգնումը՝ որպես ցուցասրահ, և ավանդական արհեստների կենտրոնի ստեղծումը կլինեն ակտիվ գործող թանգարանի գործունեության առաջին քայլերը: Թանգարանը կիրավիրի ավանդական արհեստներով զբաղվող վարպետների, որպեսզի ուսուցանեն տեղացի աշակերտ-արհեստավորներին և աշխատեն թանգարանի այցելուների հետ: Ակնկալվում է, որ զբոսաշրջիկների և հոգևորականների համագործակցությամբ մշակված լուծումները օրինակ կծառայեն երկրի այլ շրջաններում նույնպես կիրառելու համար:

Զբոսաշրջիկները հիմնականում դժգոհ են գներից, քանի որ արհեստականորեն թանկացվում են գները: Հատկապես գոհ են գյուղացիների վերաբերմունքից, հայկական հյուրասիրությունից:

Մեր ուսումնասիրության ընթացքում ակնհայտ դարձավ, որ զբոսաշրջության զարգացումը էականորեն փոխել է տարածքի գյուղացիների աշխարհայացքն ու ավանդական կենսակերպը: Հարցումների ընթացքում գրուցելով տարբեր տարիքային խմբերի անձանց հետ, զգացվում էր եկվորների ազդեցությունը տեղացիների վրա: Ի տարբերություն այլ գյուղական բնակավայրերի՝ այստեղ շատ հեշտ են շփվում օտարների հետ, քանի որ, ըստ մեր բանասացների՝ «Փոքր տարիքից տուրիստ ենք տեսնում»: Երեխաներն առավոտյան մարզանք են անում հյուրերի հետ, ինչպես նաև մասնակցում են Խաղաղության կորպուսի (Peace Corps) կազմակերպած միջոցառումներին՝ անգլերեն արտասանում, պատմում իրենց ավանդույթների մասին:

Գյուղում գրեթե բոլոր տներում ինտերնետ կապ կա:

Վերը ներկայացված փաստերից կարելի է վստահորեն եզրակացնել, որ «Տաթև» զբոսաշրջային կենտրոնն իր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, ավանդույթներով խիստ յուրահատուկ և հեռանկարային է Հայաստանում զբոսաշրջային գործընթացում առաջատար դիրք ու դեր իրականացնելու առումով: Այսուհանդերձ, ցանկալի է, որ այն վերածվի ժամանակակից ենթակառուցվածքներով և

տեխնոլոգիաներով հագեցած զբոսաշրջային կենտրոնի, որտեղ տեղացիների հետ կհամագործակցեն փորձառու և բարձրակարգ մասնագետները:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրել տարածքի բնակլիմայական ու մշակութային առանձնահատկությունները՝ ի նպաստ զբոսաշրջության զարգացման հեռանկարի: Համալիր ծրագիր կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև զբոսաշրջիկների առանձնահատկությունները, նախասիրությունները, գնողունակությունը, ինչպես նաև միաժամանակ ակտիվացնել գովազդի բազմազան ձևերն ու եղանակները:

**ЛИЛИТ ВАРДАНЯН – Проблемы развития туризма в Армении (на примере монастырского комплекса Татев).** – Статья посвящена культурному туризму в Армении и особенностям его организации, причём преимущественное внимание уделено монастырскому комплексу Татев, находящемуся в Сюникской области. В статье, основанной на печатных материалах, а также собственных исследованиях автора – личных наблюдениях, опросах местных жителей и туристов, – говорится среди прочего о мерах, предпринимаемых административными структурами и местным населением для развития туризма.

Чтобы обеспечить конкурентоспособность армянских памятников культуры на международном туристическом рынке и привлечь гостей из-за рубежа, необходима комплексная стратегия, к разработке которой следует привлечь всех заинтересованных – специалистов в области туризма, культуры, бизнеса. Нужно также всемерно способствовать гармоничному и взаимовыгодному сотрудничеству государственного и частного секторов. Если стратегическая программа будет исполнена, то Татев с его климатическими условиями и выдающимися историко-архитектурными достоинствами способен занять лидирующие позиции в сфере культурного туризма.

**LILIT VARDANYAN – The Issues of Development of Tourism in Armenia (on the Example of Tatev Monastery Complex).** – This article is about arrangement and implementation of cultural tourism in Armenia and particularly in the monastic complex of Tatev in the region of Syunik. It is based on publications in regard of this issue and field research by the author /personal observations, the method of private conversations and opinion polls with the native residents as well as tourists/.

The article is a brief presentation of the measures implemented by the administrative institutions and the native population aimed at the development of tourism in the region.

The examination of the materials leads to the conclusion that in order to secure the competitiveness of the Armenian culture in the international arena and to achieve bigger markets due to that it is necessary to develop a comprehensive strategy involving interested professionals in the spheres of tourism, culture, science and business contributing to the harmonious and mutually beneficial cooperation between the public and private sectors.

The presented facts prove that in case of implementation of a complex strategic project the tourist centre “Tatev” with its climatic conditions, historic-cultural peculiarities and local traditions has the perspective of holding the leading position in the Armenian tourist market.